

ԱՐԱՐԱՏԻ ԵՒ ԱՐԱԳԱԾԻ ԳԱԳԱԹՆԵՐԻՆ

Կան զգացմունքներ, որ մարդուս մէջ չատ են խոր և մնայուն. այդպիսի զգացմունքով եմ ես կապուած մեր երկրի երկու լեռների հետ: Արագած և Արարատ, երկու անուններ, որ այնքան մեծ են և հին, որ այնքան հմայիչ են և գեղեցիկ, այնքան լի յիշողութիւններով և պատմութիւններով, այնքան զրաւիչ պատմագէտի, բանաստեղծի համար, կրօնական մտածմունքի և նկարչական թափի համար: Առաջին անգամ ես դոցա տեսայ 1892 թուին, երբ Էջմիածին հրաւիրուեցի իբրեւ Գէորգեան ճեմարանի ուսուցիչ: Այդ օրուանից սկսած նոքա իմ մտածմունքների և երեւակայութեան անբաժան ընկերներն են: Երբ, պատահել է, հեռացել եմ Էջմիածնից, երբեմն չրջանից և չրջապատից յուսահատուած, վշտացած և դառնացած, անբացատրելի թախիժ եմ զգացել դէպի այդ երկու գեղեցիկութեամբ աննման և արտասովոր ու վեհութեամբ օժտուած հսկաները: Հանգուցեալ Սրբիմեան Կաթողիկոսի օրով մի անախորժութիւն ունեցայ. նա չէր թոյլ տալիս իմ ծրագրած մատենադարանի շինութիւնը իւր ներկայ տեղում շինելու, երկու ճակատով դէպի Արագած և Արարատ դարձած: Ամեն օր այդ սքանչելիքները աչքիս առաջն են. ննջարանիս առաջ կանգնած է քառապլուխ Արագածը, ընդունարանի հանդէպ են լեռնագագաթների թագաւոր մեծ և փոքր Արարատները:

Ես կամենում էի և երազում չբաւականանալ միայն հեռուից դիտելով սքանչանալ դոցանով, այլ մօտիկուց, չատ մօտիկուց տեսնել և ծանօթանալ նոցա հետ: Ամառները ընդհանրապէս բացակայ էի լինում Էջմիածնից և ինձ չէր յաջողում մենակ կամ որեէ արշաւախմբի հետ այդ լեռները բարձրանալ: Բայց դիտէի, որ պիտի հասնեմ նպատակիս:

1910 թուի յուլիսի 20-ին բարձրացայ Արագածի չորս գագաթներից մէկը. 1912 թ. օգոստոսի 20-ին ցերեկուայ ժամի 2-ին գտնուեմ էի մեծ Արարատի գագաթին:

Ա Ր Ա Գ Ա Ծ

Ա.

Ատաթէոս Իզմիրլեան կաթուղիկոսը 1910 թ. ամառը զբո-
նում էր Հայրապետական Բիւրական ամառանոցում, մշտապէս
նրա մօտ էին Մեսրոպ Նշանեան, Գրիգորիս Բալաքեան երուսա-
ղէմից և Կ. Պօլսից իւր հետ բերած վարդապետները և էջմիածնի
միաբաններից Տ. Կոմիտաս և Տ. Յուսիկ: Դոցա հետ խօսել և
պայմանաւորուել էինք էջմիածնում, որ նոքա Բիւրականում Արա-
քածի դազաթը բարձրանալու համար պատրաստութիւններ տես-
նեն և ինձ իմացնեն իրենց հետ միանալու: Գրիգորիս վարդապե-
տի նամակից տեղեկացայ, որ Կաթուղիկոսի թոյլտուութեամբ ամեն
ինչ պատրաստ է և ինձ են սպասում: Յուլիսի 18-ին գնացի Բիւ-
րական, 19-ին վարձեցինք ձիեր, ճանապարհ ընկանք ամսի 20-ին
առաւօտը շատ կանուխ:

Այդ տեղից մեզ հետ կար իբրեւ ճանապարհացոյց Կաթուղի-
կոսարանի հայ ծառայ: Մենք չորս էինք՝ Կոմիտաս, Յուսիկ, Գրի-
գորիս վարդապետները և ես:

Առաւօտեան ժամի 6-ն էր, օրը պարզ, օդը մաքուր և չափա-
զանց դուրեկան, մահաւանդ ինձ համար, որ էջմիածնի յուլիսեան
չոգերից էի այդտեղ բարձրացել: Արեւ շառագունել էր Հայաստանի
բարձր և փոքր դազաթներն ու լեռնաշղթաները, իսկ դաշտի մէջ,
լեռների վիթխարի ձորերում և ստորոտներում դեռ եւ լուսոյ և խա-
ւարի մրցումն էր: Արարատեան դաշտը՝ չրջափակուած հայկական
լեռնաշղթաներով՝ մի տեսակ լայնարձակ լճի էր նմանում, ծած-
կուած երկրից ծխացող գոլորչիներով: Այդ բարձրացող գոլորչիները
աւելի թանձր էին մանաւանդ Արարատի ստորոտներում, Երասխ,
Սև ջուր, Քասախ և Չանգու գետերի հովիտներում:

Ճանապարհը, որով մենք վերեւ էինք բարձրանում մեր լեռ-
նոտ երկրի համար շատ սովորական է՝ ոլորապտոյտ, քարքարոտ,
զառիվայր զառիվերներով: Մենք սակայն չարունակ զառիվերների
հետ գործ ունէինք: Դեռ երկար ժամանակ գանգատուելու պատ-
ճառ չունէինք, դեռ եւ անցնում էինք հայ և թուրք ինակլու և Դա-
ջաբուլազ կամ Փիրբուլազ գիւղերի սահմաններով, նոցա վարած
արտերի միջով, որտեղ աւելի կամ պակաս թերութեամբ տարա-
ծութիւններն յաջորդում էին բաւական ընդարձակ լեռնադաշտեր
ի մեծ հանգստութիւն մեր լեռնային փոքրիկ, զգաստ ձիերի:

Երկու ժամ անց մենք գտնւում էինք Փիրբուլազ գիւղում:

Թուրք Ազիզ բէկի վրանում, որտեղ մեզ հիւրասիրեցին կաթով և թէյով: Ահա այդտեղ կազմակերպուեց մեր իսկական շարշաւախումբը, Ազիզ բէկն էր յանձն առել մեզ առաջնորդելու գէպի լիւնագագաթը անփորձ և անօգնով անցկացնելով Արագածի լայնարձակ սարաւանդների վրայ ամենայն ուղղութեամբ սփռուած քրդերի վրաններով: Նա այդ ամառուայ քրդերի էլբազին էր՝ վրանաբնակների ամառուայ ստիկականական և մասամբ նաև դատաստանական անմիջական և եթէ կուզէք նաև ամենամեծ պետական պաշտօնեան: Նա աւարտել էր Երևանի ուսուցչական սեմինարիան, մի քանի տարի պարապել ուսուցչական պաշտօնով, հետևապէս իրեն ինտելիգենտ անձնաւորութիւն պէտք էր յուսալ, որ յարմար է իւր պատասխանատու դերում:

Բացի նորանից մեզ հետ միացան Ազիզ բէկի եղբայրը և մի ազգականը, որ ամառուայ չոգերին Երևանից հիւր էին եկել էլբագու սքանչելի Փիրբուլաղ և Արբաղբիւր ամառանոցը:

Մեր խումբը գնալով մեծացաւ. մեզ հետ էին էլբագու ձիաւորները, ճանապարհին միանում էին քրդերի առաջնորդները, որոնց համար յարմար առիթ էր միանգամայն անցործ վրաններում նստելու փոխարէն, պատել հիւրերին և շրջել Արագածի սքանչելի բարձրութիւնները: Չորս վարդապետներն խումբը այդ ձևով ստուարացաւ մօտ քսան ուղեկիցներով:

Ի՞նչը կարող էր համեմատուել այդ աննման ճանապարհորդութեանը, կամենում էինք Արագածի գագաթը բարձրանալ, յաղթելով ամեննատեսակ դժուարութիւնների, ստացուեց մի լաւագոյն զրօսանք—Partie de plaisir մեծ և ոչ սովորական չափերով:

Բ.

Արեւ բարձրացել էր, երկինքը պայծառ էր, ամպի պատառները զրուած երկնակամարի վրայ կարծես սպառնում էին ծածկել բնութեան վեհ տեսարանները, գագաթին մօտեցած ժամանակ լսուեց որոտմունք, սակայն այդ բոլորը անհետ անցան, այդ և հետևեալ օրը ոչինչ մեզ չխանգարեց:

Մեր մարշրուտը կազմուած էր այսպէս. ժամի 12 ին կամ փոքր անց պիտի հասնէինք Ղարաղիօլ լճի ափը, ուր մեզ համար պատրաստած էր ճաշ և թէյ, գիշերը պիտի անցնէինք գագաթին ամենամօտ քրդի վրանում, որպէսզի հետևեալ օրը կանուխ ելնելով բարձրանայինք գագաթը և նոյն օրը վերադառնայինք Բիւրական: Տարածութիւնները մեծ չէին և ոչ էլ յոգնեցուցիչ:

Փիրբուլաղից արշաւախումբը ճանապարհ ընկաւ 9-ից փոքր անց, Բրդական վրանները, երբեմն մէկ մէկ առանձնացած, երբեմն խմբերով, յաջորդում էին իրար: Փիրբուլաղի սքանչելի աղբիւրից

յետոյ երկար ժամանակ ջրերի չէինք հանդիպում. վրանաբնակների մեծ մասը հեռու տեղերից են ջուր բերում, բայց ոչ այնպիսի հեռաւորութիւնից, ինչպէս Արարատի վրանաբնակները: Իսկ վառելիքի նեղութիւն Արաղածի քրդերը ամենեւին չունին: Կաղնի մացառները, բայց մանաւանդ Հափաղանց առատութեամբ բուսնող գաղի փշերը ամեն տեղ են: Թէ ջուր բերելը, թէ նոյն իսկ դազ ու մացառներ հաւաքելը և եղների վրայ բարձած վրաններ հասցնելը, բոլորը կանայք են կատարում: Վրանաբնակ քուրդը սնւում և մեծանում է իբրեւ պարագիտ ամենից առաջ իւր ընտանիքի կանանց սեռի նկատմամբ. իսկ իւր էներգիայի մեծագոյն մասը նուիրում է իւր աւազակաբարոյ ընազդներին. նա գողանում է, մարդ սպանում, աւազակութեամբ զբաղւում, ազջիկ առեանդում, որովհետև այդ նրա շարժման մէջ լինելու պահանջն է:

Շարունակ կանգ էինք առնում քրդական վրանների առաջ, տղամարդիկ շտապում էին մեզ ողջունելու. կանայք, աղջիկներ և երեխաներ հեռու կանգնած հետաքրքրութեամբ դիտում էին մեզ առանց երեսները ծածկելու, վրանների մութ անկիւններում թագնուելու, կամ մէջքները ճանապարհորդներին դարձնելու նոքա աւելի պարզ են, քան հայ և թուրք գեղջիկները:

Էլբրացին ճանապարհին շարունակ իւր պաշտօնն էր կատարում, շարունակ կտրուկ և արագ վճիռներ կայացնելով և կարգադրութիւններ անելով: Մի տեղ նա իւր ձիաւորներին պատուիրեց անակընդիպ կերպով կալանաւորել երկու քրդի, ձեռքերը մէջքերին ամուր կապկապել և մի քուրդի յանձնելով, ուղարկեց իւր ամառանոցն իւր ժամանակաւոր բանտը, որ այնտեղից յետոյ Երևան փոխադրել տալ: Դոքա ընդամենը 20 օր առաջ վերադարձած լինելով չորսամեայ տաժանակիր աշխատանքից, նորից սկսել էին աւազակութեամբ պարագել. մի ուրիշ քուրդ գողացել էր իւր հարեանի եղը և տէրը խնդրում էր չուտափոյթ կարգադրութիւն, քանի որ եղը դեռ չէ մորթուած—մի այլ տեղ դանգատուողը դաշտեցի հայ էր, որի լծկանները լեռ բարձրացող քուրդը առաջն արել, չնչին գնով ծախել էր ուրիշին: Ընդհանուր այդ դէպքերում անհրաժեշտ է չուտափոյթ կարգադրութիւն:

Արագածի սարահարթերը երեակայում էի մշտական կանաչով, անթիւ, գոյնզգոյն ծաղիկներով զարդարուած. մեր տեսածը այդպէս չէր: Ամբողջ ճանապարհին մինչև Ղարազեօլ լիճը հասնելը աղբիւր չտեսանք. եղած ջրերը գտնւում են հովիտներում. անհամար ոչխարներն և տաւարը արածել, գետնին էր հաւասարեցրել եղած բուսականութիւնը: Տարին արտասովոր չորային էր, անձրևներ չէին գալիս. օդի մէջ խոնաւութիւն Հափաղանց սակաւ էր, ուստի նուազ էր բուսականութիւնը:

Որքան վերև էինք բարձրանում, սարագաշտերը աւելի էին ընդարձակուում. Արագածի վիթխարի նստումաձքը որքան էլ Արաքստեան գաշտից դիտելիս չափազանց մեծ է, իրականի մէջ նա այնպիսի չափերով է ներկայանում, որ կարձեռ մի նոր աշխարհ է քայլում, գաշտից երեսացող փոքրիկ ու աննշան ձորակները և ցածրիկ բլուրներն ու բլրակները, մօտիկուց դիտելուց մի մի մեծ գագաթներ են, խորը, անգնդախոր ձորեր. հարիւրաւոր և հազարաւոր գետնափն տարածութեամբ լեռնագաշտեր. Այդ է պատճառը, որ Արագածը կարողանում է Արարատեան գաշտի վրանարնակ բոլոր քրդերին, մասամբ նաև լեռ բարձրացող թուրքերին իւր մէջ տեղաւորել. էլբագու հաշուով վրանարնակ քրդերի թիւը մօտ 90 000 է:

Փիրբուլաղից երկու ժամաչափ բարձրանալուց յետոյ մեր առաջ բացուեց Համբերդ պատմական բերդաւերակի վիթխարի ձորը: Տեղացիները այդ ձորը այժմ կոչում են Արխաշան: Չորի սկսումաձքը կարագեօլ կոչուող լճիցն է. նրա մէջ են թափւում Արագածի հաբաւ արեմտեան փեշերի ջրերի մի մասը, կարագեօլի աւելցուկ ջրերը, որ փոքրիկ գետակ կազմելով Բիւրական, Ագարակ և Ղզըլթամուր գիւղերի մօտով գալիս թափւում է Քասախ գետակը: Համապատասխան մի վիթխարի ձոր էլ գտնւում է Արագածի արեւելահիւսիսային կողմում, որ սկիզբն է առնում չորս գագաթների միջի պատուումաձքից, իւր մէջ է ընդունում գագաթներից հալւող ձևան ջրերը, և գեղեցիկ ջրվէժներով գահալիժելով, Խազնաֆար գիւղի մօտ միանում է դարձեալ Քասախին, սրա Ապարանից բղխող ակունքներին:

Արարատեան ընդարձակ և չափազանց պտղաւէտ գաշտը ամբողջովին մշակման ենթարկուելու համար պէտք է ոռոգուի և չափազանց մեծ քանակութեամբ ջրերի կարիք ունի: Եղած գետակները, բացի Սև ջուր գետից, ամբողջովին չահապործուած են, մնում է միանգամայն անձեռնամուխ Սեանի լիճը, բնութիւնից կարձեռ յատուկ յիշեալ նպատակի համար ստեղծուած ջրամբարը. իսկ եթէ նա չբաւականանայ, Ամբերդի և Խազնաֆարի ձորերը ամբարգանքներով արհեստական ջրամբարների պիտի վերածուեն և քաղաքակրթութեան գործին ծառայեն: Եւ այսօրուայ սարսուռ աղդող վիհերը ժամանակին կարող են մարդկային բարեկեցութեան աղբիւր ծառայել:

Մեր հասած գաշտավայրից շատ գեղեցիկ տեսարան էին ներկայացնում Համբերդի և հին եկեղեցու աւերակները: Բերդը կառուցուած էր ձորի բերնում սեպացած ժայռի վրայ, այժմ աւերակ և անփառունակ ծառայում է կիսավայրենի քրդերի բնակութեան տեղի: Ընդհանրապէս այդտեղից ընդհանուր տեսարանը չափազանց տպաւորիչ էր. հորիզոնը ընդարձակուել էր, օրը կէսօրին մօտ էր:

օգը մաքուր և պայծառ, դաշտի անտարանները աւելի որոշ էին, անհետ կորել էր առաւօտեան մշուշը: Արեւը շատ էր տաք. բայց չոր և նոսր օդը այն աստիճան դուրեկան էր, որ ոչ ոք տքութիւնից էինք նեղուում և ոչ էլ ճանապարհորդութիւնից անհանգստանում:

Գ.

Մեր բարձրալանդակից երկու ուղղութեամբ կարելի էր հասնել լեռնապագաթի ստորոտներին, կամ թեքուել դէպի հիւսիս-արեւելք, Ապարանի ուղղութեամբ, որ թէ կարճ և թէ շատ հանգիստ ճանապարհ էր. կամ գնալ դէպի արեւմտահարաւ և ապա Ղարապետի մօտից չրջել դէպի արեւելք: Այս ուղղութիւնը դադաթից մեզ հեռացնում էր, ճանապարհն էլ բաւական անհանգիստ է: Սակայն մեր նպատակն էր յիշեալ լիճն էլ տեսնել, որի մասին թեր և գէժ տեղեկութիւններ կան: Ոմանք ասում էին, թէ նա գտնուում է չորս գագաթների մէջ տեղը, միւսները նրան շատ մեծ էին ներկայացնում: Կար պատմական մի աւանդութիւն ևս, թէ նա իւր բնական զիրքով ջրեր էր մատակարարում Շիրակի դաշտին, մինչև որ էջմիածնի փլիխպղոս կաթուղիկոսը փոխել է նրա ուղղութիւնը և ջրերը թափել Համբերդի ձորը: Անհրաժեշտ էր աւտելեաւն ստուգել:

Ղարապետի և մեր գտնուած լեռնադաշտի արանքում բարձրացած է մի վիթխարի բլուր, իսկապէս մի լեռնապագաթ: Սորան մենք բլուր ենք կոչում միմիայն համեմատած Արագածի չորս նշանաւոր գագաթների հետ. սրովհետեւ նրա պէս բլուրներ կամ նրանից աւելի փոքր Արագածի վրայ չափազանց յաճախ են պատահում: Մեծ և փոքր Արարատների գագաթները մի մի են, նոքա համարեա զուրկ են մեծ և փոքր ձտերից: Արագածի ամբողջ բարձրութիւնը իւր բաղմաթիւ բլուրներով և գագաթներով կարծես հսկայի մի ընտանիք է, որի զանազան հասակի անդամները ընդթեւան հարուածից արձանացած իրենց տեղերումն են մնացել:

Այդտեղ իմ ուշադրութիւնը գրաւեց մեր ընտրած ճանապարհի ուղղութեամբ շարունակ վեր բարձրացող մի հին, խոշոր և այժմ բարձի թօղի արած մի արխ: Առաջին անգամ արխը տեսնելով, կարծեցի թէ քրդական ձեռքի գործ է, վրանատեղերը ջուր բերելու համար անցկացրած: Սակայն շատ շուտով համոզուեցի, որ այդ մի մեծ ձեռնարկութիւն է և կիսավայրենու գործ լինել չի կարող: Սակեցի մտածել, որ դա փլիխպղոս կաթուղիկոսի Արագածի վրայ շինած արխն է, որով մեծագործ կաթուղիկոսը պատռելով Ղարապետի բերանը, նրա ամբարուած ջրերը բերել, թափել է Գասախ գետը, որպէսզի աւելացնի վանքապատկան արխի ջուրը:

Հին արխը չկարողացայ ևս ամբողջ ուղղութեամբ ուսումնա-

սիրելի. ևս նրան տեսայ շատ բարձրում, հետևեցի նորա ընթացքը մինչև նորա սկսուածքը՝ այն է Ղարապետ լճակը, դէպի ուր մենք գնում էինք ուղիղ արխի ճանապարհով: Յամենայն դէպս կամենում ևմ մի հանգամանքի վրայ ապագայ ուսումնասիրողի ուշադրութիւնը դարձնել: Արիւր սկսուեց Ղարապետից, նա թեքուում է նախ դէպի հարաւ, ապա դէպի հարաւ արեւելք, քերելով յիշածս մեծ բլուրի ստորոտը. ձեռնարկողը զիգմամբ ջրի հոսանքը Համբերդի ձորից փոխել է և հեռացրել նորանից, ուստի չկարողացայ լաւ բմբռնել, եթէ դա իրաւամբ Փիլիպպոս կաթողիկոսի արխն է, նա որտեղ կարող էր միանալ Քասախի հետ, էջմիածնի Շահարխի ջուրը աւելացնելու համար:

Բաւական կարեւոր էր. միայն պատմական և ոչ գործնական տեսակէտից, հետախուզել և ի յայտ ածել արխի ամբողջ տարածութիւնը, գուցէ դա աւելի հին, ուրարդական չրջանի ձեռնարկութիւն է: Արագածի վրայ, ինչպէս փոքր յետոյ կ'իշատակենք, գտնուում են պատմական այլ հետաքրքիր յիշատակ սրահներ, ուրիշներից էլ յիշուած են, բայց ամենեկին չեն ուսումնասիրուած:

Ժամի 1-ին հասանք լճակի ափին: Այդտեղ ճաշեցինք և երկար հանգստացանք: Արագածի փեշերի վրայ մենք տեսանք հինգ լճակ, դա նոցանից ամենամեծն է, մօտ 150 սամէն երկար, 50 լայն: Նորա հիւսիսարեւելեան կողմում բարձրանում են բլուրներ, միւս ափերը կազմում են բաւական ընդարձակ և ոչ այնքան բարձր հարթ տարածութիւններ: Լիճը անկասկած շատ մեծ է եղել, տարէցտարի փլչում են չրջապատի բլուրները և թափւում նրա մէջ: միւս կողմից արհեստական կերպով բացել են նորա բերանը նրա ջրերից օգտուելու համար: Նոյն գործը այժմ էլ է կատարւում. մեր այնտեղ եղած ժամանակ հայ գիւղացիք խորացնում էին պատուածքը, որպէսզի ջուրը տանեն իրենց գաշտերը ոռոգելու. լճակը փոքրիկ ջրամբար լինելու մեծ յարմարութիւն ունի:

Լճակից շատ մօտ և յարմար էր այն գաղաթը բարձրանալը, որ բարձրացանք հետեւեալ առաւօտը. սակայն մենք անձանօթ էինք, միայն հայր կոմիտասը եղել էր Արագածի գաղաթներից մէկի վրայ բարձրանալով Աղարանի կողմից, իսկ միւսներս սպասում էինք, թէ դէպի ուր կ'առաջնորդի մեզ Ազիզ բէկը: Ժամի 5-ին Ղարապետից ճանապարհ ընկանք հարաւ արեւելեան ուղղութեամբ, դէպի մերձակայ հարուստ քրդի վրանը, որի որդին եկել էր ընդառաջ և մեզ հրաւիրեց գնալ իւր հօր վրանում գիշերելու: Ժանապարհ կոչուած փոքր և վտանգաւոր չաւիղը, որով մենք անցանք ձիերից ցած չգալով, ընկած էր մի մեծ բլրի փեշերին: Այդ բլրի նստուածքը չափազանց զառիվայր էր. անձրեւներն ու հալւող ձեռն ջրերը իրենց արագընթաց հոսանքով ակօսել են նրան ամեն ուղղութեամբ. ճա-

նապարհն ընկած էր բարձունքի մօտաւորապէս միջին տարածութեամբ, ներքեւում անդունդ էր, քարակարկառով, ծածկուած. մեր ձիաւորները երկար շարան կազմելով իրար յետեւից բարձրանում էին դէպի բլրի գագաթը: Ամեն մէկը աշխատում էր յետ չնայել, ձիու անդգոյշ քայլը, նրա մի սայթաքումը կարող էր շտապանց վտանգաւոր լինել: Անհոյ էին և կարծես միանգամայն ապահով քրդերը, որոնց համար ընտանի էր այդ ճանապարհը. բայց ապահով էին և զոյշ նաև լեւոնների վրայ շարունակ ճանապարհ անցնող ձիերը:

Բլրի գագաթից մեզ այնքան մօտեցան Արագածի երկու գլուխը, որ կարծես կարելի էր ձեռքով հասնել: Արեւ մօտեցել էր իւր մուրքին՝ ոսկեգօծելով ամենաբարձր գագաթները, հեռում մշուշապատ երևում էր Արարատեան դաշտը, իսկ աւելի հեռու հորիզոնը փակում էին Մեծ ու Փոքր Մասիսները: Երկար վայելել այդ տեսարանը չէինք կարող. քրդի վրանը բաւական հեռու էր, հարկաւոր էր շտապել: Ձիերից ցած իջանք. պէտք էր նորից, միայն հակառակ կողմով, հասնէինք մեր բլրի ստորոտը. ուր սկսուած էր մի սիրուն, սիզաւէտ հովիտ, միջում մի գեղեցիկ լճակ:

Ճանապարհին, ամայութեան և մենակութեան մէջ ընկած մի փարախում, երկու շուն կատաղի հաջոցով փորձում էին փակել մեր առաջը: Բանից ետեայ, որ հովիւները մի վերաւոր ոչխարի թողել էին փարախում, նրան յանձնելով չների ապահով և հաւատարիմ պահպանութեանը. մի շուն էլ նոյն ձևով պահապան էր կանգնած մեզ հիւրապիրտը քրդի սքանչելի նօրդին, որ օտներում չղթայ արածում էր կանաչ մարգագետնի մէջ:

Չօրից կրկին պիտի բարձրանայինք, բայց ոչ հեռու և ոչ էլ վտանգաւոր ճանապարհով: Մութն ընկնում էր, բայց ահա շատ մօտիկուց լսելի էին հազարաւոր ոչխարների ու գառների իրար-խառնման այն խառնափնթոր աղմուկը, որ այնքան կենդանացնում է լեւոններ ու ձորեր: Մի փոքր անց չների կատաղի և բուռն յարձակումը յետ միադաժնների հանգստացրեց: Հասել էինք մեր իջևանը:

Դ.

Սարի լանջին գողաւոր ընդարձակ հարթութեան մէջտեղում զարկւում էր Հաջի Հիւսէին քրդի վրանը: Վաթսուն տարեկանին մօտ մի աշխոյժ և առոյգ ձերունի էր նա, քրդական փաթթոցով զլիարկը զլիսին, կապոյտ արան հագին, կատարեալ լեռան իշխանի վեհութեամբ կանգնած էր իւր վրանի մօտ և սպասում էր մեզ ընդունելու:

Նրա վրանը շատ մեծ էր, առանձնացած միւսներից, ծածկուած

այծի մազից հիւսած կտորից: Իսկ հիւրերի համար, որ առ երեւոյթ անպակաս է նրա հիւրասէր յարկից, յատուկ վրան էր պատրաստած սպիտակ քաթմանից, նմանութեամբ զինուորական վրաններին:

Մի օրուան անցած ճանապարհը, թէ ոտով և թէ ձիի վրայ նստած մեզ բաւական յոգնեցրել էր. ասանց ուշադրութիւն դարձնելու հիւրերի վրանում փոռածքի մաքրութեանը, ամեն մէկս մի կողմ թեկն ընկանք հանգստանալու: Տաս րոպէ անց, օդի սքանչելի մաքրութիւնը և զովութիւնը մեզ այնքան կազդուրեց, որ վրանից դուրս եկանք և խնդրեցինք մեզ դուրսը թէյ տալ:

Օգը մեզմ էր և անուշ. մեզ ի դուր վախեցրել էին Արագածի գիշերուայ ցրանքից: Իսկ մենք բացօթեայ նստած էինք և չրջապատուած մեզ հիւրասիրող քրդերով և նոցա երեսնաներով, այլ և այլ հարցերով փորձում էինք թափանցելու այդ վրանաբնակներին ըստ ամենայնի պարզ և նախնական կեանքը: Եւրոպան հասել է 20-երորդ դարին, մենք Ասիայում ապրողներս ամեն ճիշդ թափում ենք նոցա համընթաց լինել, իսկ ահա մի ժողովուրդ, որ նախապատմական շաւղից մի քայլ առաջ անցնել և թողնել իւր նախնիքների գծած ուղին ամենևին չի կամենում: Արագածի փեշերին ապրող մօտ 30,000 քուրդ ազգաբնակչութիւնից միայն մի քուրդ, Մահմուդ աղան, որ մեզ ուղեկցողների շաքուռն էր, նա է միայն փոքր ի շատէ թուրքերէն գրել կարգաւ սովորել: Ազիզ բէկի նղմայրը, Ասֆանդիար բէկը, Նրեանի գիմնագեայի թուրքերէն լեզուի ուսուցիչը, թուրք նոր ինտելիգենցիայի երիտասարդներից, առ երևոյթ քաջատեղեակ զուրանին և տաճկական ու պարսկական գրականութեանը, երկար ժամանակ համոզում էր Հաջի Հիւսէինին, որ նա իւր թոռներից մէկին ուսումի տայ, կամ ինչպէս բէկն էր բացատրում, թեյլ տայ իւր թոռներից մէկին ռուս դասնալու: Քուրդը ուշադրութեամբ լսում էր բէկի զուրանից առաջ բերած բազմաթիւ վկայութիւնները, լսում էր նոցա բացադրութիւնները, թէ ըստ մարգարէի ուսումը անհրաժեշտ է հաւատացեալին, բայց երբ հերթը իրան հասաւ պատասխանելու, մի պատրուակ բռնելով, հեռացաւ և խօսակցին թողեց վշտահար սրտով:

Հաջին շատ հարուստ է, նրա ոչխարների հօտերը բազմաթիւ են, ունի ամենալուսե կայլափները, իսկ արանում այնպիսի խոտահարք, որտեղից տարեկան քաղում է 40,000 խրձից աւելի խոտ: Հաջին լսել էր, որ էջմիածնի վանքը իւր զորութեան խոտը քաղել տալու համար մեքենայ է բերել տուել: Մտածում էր ինքն էլ գնել նման մեքենայ. ինձնից մանրամասն տեղեկութիւն հաւաքեց: Նա ունի իւր կանխիկ դրամը, սակայն իւր կեանքի կղանակի մէջ փոփոխութիւն մտցնել գծուարանում է: Մենք ապրում ենք, ասում

էր նա, կենդանիների նման, մենք կարողութիւն ունինք, սակայն վայելել չգիտենք:

Նրա ցանկութիւնը կեղծ էր: Չէ որ նրա հաւատակիցը կեանքի փոփոխութեան նոր ճանապարհ էր ցոյց տալիս, այդ դէպքում նա խուսափում էր նրան պատասխանելու, նրա մէջ նկատելի էր որոշ բարեպաշտութիւն: Մեզ հետ նստած թէյ էր խմում, կատակներ անում, վայրենուն յատուկ պարզասրտութեամբ թէ ցինիլութեամբ խօսելով իւր կանանց, հարսների մասին, ի ներկայութեան իւր որդիների և փոքրահասակ թոռների: Եւ յետոյ միանգամից խօսքը ընդհատեց և երեսը չրջնելով դէպի Մեքքա, մի քանի վայրկեանում կատարեց իւր նամազը: Անկասկած նա խորը հաւատ ունի լի նախապաշարումներով:

Քրդական սովորութիւնների և նիստ ու կացի մասին բաւական տեղեկութիւններ ստացանք, միայն մէկը բաւական ընտրոջ է, կամենում եմ յիշատակել: Հաջին պատմում էր, որ մինչև օրս նա առետրի մէջ, երբ վաճառում է իւր հարկւրաւոր ոչխարները, ոչ մի դրաւոր պայման չի կապում, թէ և ըստ մեծի մասին փողը կանխիկ չէ ստանում: Թուրք կամ հայ գնողները երբեմն գրժում են խոստմանը և փաստորապէս կլանում են Հաջու փողերը, իսկ եթէ գնողը քուրդ է, խօսքի գրժումն աւելի ունենալ չի կարող: Քուրդը աւաղակ է, ասում էր նա, մարգասպան, ազգիկ փախցնող, բայց նա երբէք չի ուրանալ իւր պարտքը. ամենատիկերիմ թշնամին անգամ անպատճառ կվճարի իւր հափսիք—իւր պարտքը:

Գիշերուայ ժամի 11-ն անց էր. ամենքս յոգնած, թողնելով քուրդ երկխանների մանկական երգերն ու լէլէները, նոցա կայլին, ծխացող կրակի շուրջը, հաւաքուեցինք վրանի տակ, ընդամենը տաս հոգի և փորձեցինք երկու շարքով աջ ու ձախ պառկել քնելու համար: Համարեա բոլորը լաւ և շուտ քնեցին, միայն իմ քունս չէր տանում: Ծների հաջոցը, ձիաների անհանգիստ խրրինջոցը և ձիապանների ու շնատէրերի աղմուկը աչքերիցս փախցրել էին քունը: Գիշերը փոքր անձրև եկաւ, բայց առաւօտը բացուեց պայծառ, ջինջ արևով:

Ժամի 5-ին բոլորս պատրաստ էինք, առուակի սառնորակ ջրով լուացուած. սակայն ճանապարհ ընկանք միայն 7-ին և 8-ին հասանք Արագածի դագաթների ստորոտը: Ուղեկիցների շարքին աւելացաւ Հաջին, իւր որդիներով և թոռներով, որ մեզ հետ միասին գազաթի ստորոտում վայելեն գառան խորովածը և բուլղաման:

Լեռնագագաթի ստորոտում իջեանել էին աջէմ թուրքեր, որոնց վրանների ձեւը միանգամայն տարբեր է քուրդերից և ինձ աւելի ընտանի էր, որովհետեւ Ղարաբաղի հայերի և թուրքերի վրաններին են նման, այսինքն կոլոր են և թաղիքով են ծածկուած, մինչ-

դեռ քուրդերը վրանը չինոււմ են քառանկիւնանման և ծածկոււմ են ալծի մազէ գործուածքով:

Տեղ հասնելուն պէս, ամենևին չկամեցայ ժամանակ կորցնել, ձիերով բարձրացանք գէպի չորս գագաթների պատռուածքը, որ տեղից մի ահռելի ձորակ ուղղոււմ է գէպի Ապարան, իր մէջ առնելով Արագածի չորս գագաթների ձիւների հալած ջրերը:

Այդ ջրերը մի քանի մեծ և փոքր ջրվէժներ են կազմոււմ, որոնք բարձունքից գահավիժելով փրփրալից և մեծ աղմուկով, չնայած ջրի համեմատական սակաւութեանը, սքանչելի և միշտ յիշողութեան մէջ անջինջ մնալու տեսարան են ներկայացնում:

Անհաշիւ ուրուրներ սաւառնոււմ էին մեր գլխի վերեւ վեհութիւն և կենդանութիւն տալով առանց այն էլ չափազանց գեղեցիկ բնութեան: Շիւտերները մի քանի անգամ հրացան ձգեցին, բայց անյաջող:

Ե.

Չորը դիտելուց յետոյ, որոշեցինք առանց ժամանակ կորցնելու գագաթ բարձրանալ: Բոլոր չորսը մեր առաջն էին—գէմ՝ յանդիման: Այլի տեսութեամբ չորսը տարբեր բարձրութիւն ունին, ամենամեծը՝ հարաւայինն է, որ նայոււմ է գէպի Ապարանի հովիտը և տուրխաններից չատերը բարձրանոււմ են նորա գլուխը: Կիտարոտորակ կազմելով, համարեա համահաւասար բարձրութեամբ, հարեանութիւն են կազմոււմ երկու միւս գագաթները, որոնցից մէկը նայոււմ է գէպի Շիրակը, միւսը գէպի Շիրակի և Ապարան: Չորրորդը՝ առաջնի հանդէպ, իւր առաջն ունի Շիրակի և Ապարանի դաշտերը: Ինչ խօսք, որ չորսն էլ իրենց բարձր գլուխներով հպարտօրէն նայոււմ և իշխոււմ են շուրջ բոլորը ընկած դաշտերի և հովիտների վրայ:

Մենք կարող էինք և որոշեցինք բարձրանալ չորրորդը: Իսկապէս լիւ բարձրանալու համար բոլորս էլ բաւական անփորձ էինք և անպատրաստ: Մեզնից ոչ մէկը ոչ ալպեան կօշիկ ունէր ոչ յատուկ ձեռնափայտ և ոչ էլ յարմարեցրած տաք և կարճ զգեստ: Մի բարակ փայտ կար իմ ձեռին, որ հետս առայ մերձակայ մացառուտների միջով անցնելու ժամանակ:

Բարեբախտութիւն էր, որ Արագածը մեծ դժուարութիւններ չի ներկայացնում, օրը տաք էր և քամի չկար:

Ժամի տասին երեք հոգով՝ Կոմիտաս, Գրիգորիս վարդապետները և ես, մեր երկար կապաները հագնելիս, առանց առաջնորդի, սկսեցինք լիւ բարձրանալ: Երկար ժամանակ առաջ էինք ընթանում առանց նեղուելու իրար հետ զրուցելով և փորձելով երբեմն

իրար առաջ անցնելու Այդ տրամագրութիւնը անվերջ չէր. հետոյը և օրտի բարախումը գնալով զգալի էր դառնում. եւս սխեցի նոյն իսկ զԼ՛րի ցաւեր զգալու Բացի անպատրաստ լինելուց մի ուրիշ անփորձութիւն էլ էի արել. էջմիածնի նստակեաց կեանքին սովորած, առանց գոնէ մի քանի օրեր թեթեւ բարձրութիւններն վրայ վարժուելու, փորձում էի Հայաստանի բարձր լեռնագագաթներից մէկը բարձրանալ. Մեր կօչիկները չուտով այնպէս սրուեցին, որ երբմէ մեծ ջանք էինք գործ գնում ներքեւ շահելու համար. Մօտ մի ժամ անց հասել էինք չորս գագաթների փոսորակի ամենաբարձր կէտին և մեր առաջը երևում էր մի գագաթ, որ իսկականի տեղ ընդունեցինք. Այդ գիտակցութիւնը նոր եռանդ ներշնչեց մեզ. կարծելով թէ հասել ենք նպատակի:

Երբ այդ գագաթը բարձրացանք, երեսց որ խաբուել ենք, որովհետեւ նրա հանդէպ բարձրանում էր մի ուրիշ գագաթ, միայն աւելի բարձր. Գրիգորիս վարդապետը արդէն թուլացել էր, ամենից դժուարութեամբ նա էր առաջ գնում, մենք շարունակ նրան էինք սպասում. Նա հրաժարւում էր այդ գագաթը բարձրանալու, բայց մենք նրան ամեն կերպ խրախուսեցինք և մեծ ճիգերով այդ գագաթն էլ բարձրացաւ. Սակայն երեսց, որ այդ էլ իսկականը չի. նա կանգնած էր մեր առաջ, շատ աւելի բարձր, մօտ մի վերստ այդ երկրորդական գագաթներից հեռու և աւելի զառիվեր փնջերով:

Միակ հանգստացուցիչը այն էր, որ տարբեր գագաթների մէջ փոքրիկ թեքութեամբ բաւական երկար տարածութիւններ կային, որտեղ քայլելիս մի տեսակ զաղար էինք առնում:

Գրիգորիս վարդապետը այլ ևս հրաժարուեց մեզ ուղեկցելու և մենք էլ տեսանք, որ անկարելի է ստիպել. շատ էր յոգնել. Նա կարող էր և թողինք, որ մենակ իջնի ներքեւ:

Մօտ կէս ժամ մենք ևս դադար առանք. Հետներս ուտելու ոչինչ չունէինք, քաղց էլ ամենինն չէինք զգում:

Երբ ոտքի ելանք և պիտի քայլէինք, նկատեցինք, որ աւելի ենք յոգնած և թմրած քան քայլելու ժամանակ. Նկատեցինք, որ հանգստանալու և չունչ քաշելու համար լաւ է կանգնած մնալ, քան նստել:

Երկուսով շարունակեցինք մեր ճանապարհը. Կոմիտաս վարդապետը շատ աւելի դիւրութեամբ էր քայլում քան ես: Վանքում յայտնի է, որ նա սպարդական կեանք է վարում. ինձնից նա այն առաւելութիւնն էլ ունէր, որ Բիւրական ամարանոցում բաւական քայլել էր և բնականաբար վարժուել. Նա ինձնից միշտ առաջ էր գնում և եթէ մենակ լինէր հաւանական է աւելի շուտ տեղ կհասնէր: Քիմ առաւելութիւնն էլ այն էր, որ ձեռքի փայտ ունէի և նրա վրայ հանգստանում էի:

Ժամի մէկին հասանք մեր նպատակին՝ Արադածի չորս գագաթներին մէկի գլուխը և ուրախութեան աղաղակներով սկսեցինք մեր յաջողութիւնը արտայայտել և Կոմիտաս վարդապետը իւր հիանալի ձայնով սկսեց երգել, կարծելով թէ իւր ձայնը կհասնի ձորում մեզ սպասողների ականջներին:

Լեռնագագաթը իւր վրան ձեան հետքեր չունէր, յուլիսի արեր և սաստիկ քամիները հալել մաշել են այդտեղի ձիւնը: Նա ամբողջովին բաղկացած էր քարառկակառից, որ բարակ շերտերով իրարից բաժանուելով, խառնիխուռն իրար վրայ էին կուտակուած: Մեզնից առաջի այցելուները այդ սալերը կուտակելով իրար վրայ փոքրիկ բարձրութիւններ էին կազմել: Մենք էլ հետևեցինք նոցա օրինակին և մի այլպիսի քարակոյտ թողինք մեզ յիշատակ:

Երկար մնալ չէինք կարող. սառը քամին հարուածում էր մեզ, իսկ մենք տաքացած և քրտնած, ծածկելու ոչինչ չունէինք: Հորիզոնը չափազանց ընդարձակուել էր, կարող էինք Հայաստանի մի կտոր աշխարհագրութիւնը, իբրև մի վիթխարի պանօրամայի մէջ դիտել: Վերջիչէլ նրա մանրամասնութիւնները իրականօրէն, բայց ցրտին զիմանալ չկարողացանք:

Ինձ համար ընդմիշտ անմոռանալի է մնալու Արարատի տեսարանը այդ գագաթից: Նրա ստորոտը մշուշով քողարկուած էր. նրա վիթխարի զանգուածը կարծես գետնից կարուած, օդից էր կախուած և անհամեմատ աւելի մեծ էր, քան երբ նրա վրայ նայում ես դաշտից կամ ուրիշ բարձրութիւններից:

Գագաթից իջնելը այնքան դժուար չէր: Մենք սկսեցինք ուղիղ գծով ընթանալ, որպէսզի շուտ տեղ հասնենք: Մեր փորձը յանգուգն էր և կարող էր մեզ վրայ թանգ նստել: Տեղին ծանօթ չէինք, լեռների վրայ հարթ և ուղիղ երկացող ճանապարհները շատ անգամ խաբուսիկ են լինում և ահագին խորխորատներ են ծածկում լեռացող ուղիղ տարածութեան մէջ:

Գագաթից արագութեամբ բաւական տեղ իջել էինք, երբ հանդիպեցինք մի ձեան դաշտի, որի ներքեր բացուում էր մի սոսկալի վիհ: Նորից վերև բարձրանալ և ուրիշ ճանապարհ որոնել անկարող էինք. յոգնած և թուլացած էինք, առաջ ընթանալ անհնար էր: Մեր դժուար կայութեան մէջ մի ելք կար—եթէ կարողանայինք ձեան դաշտը կտրել, անցնել հակառակ կողմը: Ձիւնը հալուում էր, նրա տակից աղբիւրակներ էին վազում քչքչալով. կարող էր ձեան տակը բոլորովին դատարկ լինել, մեր ծանրութիւնից կտրուել և զահավիժել մեզ էլ հետը տանելով:

Կոմիտաս վարդապետը աւելի խիզախ էր. նա վերցրեց իմ փայտը և զգուշութեամբ շոշափելով ձեան ամբողջիւնը, անցաւ միւս կողմը: Ես էլ հետևեցի նորա օրինակին և մենք ազատուած էինք:

Քանի որ զժողովրդական առաջ խորհրդակցում էինք և հնար մտածում, նկատեցինք ձեան կողքերին գարնան աւետարեր ձնծաղիկը և քաղելով մի փոքրիկ փունջ կազմեցինք: Արագածի այդ տեղում գարունը հասել էր յուլիսին: Դաշտում հասել էր խաղողը: Այդ մեր երկրի առաւելութիւնն է, բնեւոր և հառարակածը իրար մօտ:

Վատնգից ազատուած, ուրախ տրամադրութեամբ առաջ էինք ընթանում: Երկրորդ անգամ էլ նորից մի զժողար տեղի հանդիպեցինք. այդտեղ հարկաւոր էր զգուշութեամբ քարեր խտտած առաջ գնալ. երկիւղալի էր, բայց ոչ այնքան վտանգաւոր:

Մի փոքր անց լսեցինք, որ մեզ կանչում են. այդ վրանաբնակ մի թուրք էր, որին էլքազին երկու ձի տուած մեզ ընդառաջ էր ուղարկել: Նա հետուից տեսել էր մեր անցած ճանապարհը. գոռում գոչումով մեզ զգուշացրել էր, որովհետեւ իբրեւ որսորդ քաջ տեղեակ էր այդ տեղերին և նկատել էր, թէ ինչպիսի վտանգաւոր տեղ ենք ընկել: Յետոյ նա միւսներին արեւելցու չափազանցութիւններով պատմում էր մեր խիզախութիւնը:

Մեր ընկերները ներքեւում ուրախութեամբ մեզ ընդունեցին և առաջարկեցին ճաշ և թէյ: Ես բաւականացայ միայն թէյով, ուստի ախորժակս կորել էր:

Նոյն օրը երեկոյեան վերադարձանք Բիւրական, անցնելով վերոյիշեալ կարճ ճանապարհը:

Զ.

Արագածը կարօտ է հիմնաւոր ուսումնասիրութեան, ես չէի կարծիլ որ նաեւ հնագիտութեան տեսակէտից: Ստուգութեան կարօտ է, ինչ որ ես լսեցի նրա ստորոտում իջնանած վրանաբնակներից. իբրեւ թէ նորա չորս գագաթի միջում կայ մի եկեղեցու աւերակ, որ մշտապէս ձիւնով ծածկուած է. երբեմն է միայն բացւում: Ինձ ասացին, թէ ինձ ցոյց կտան այն մարդուն, որ տեսել է այդ եկեղեցին. ցոյց չտուին: Արագածի վրայ կան և նախապատմական հնութիւններ: Քուրդ Հաջին իւր հետաքրքիր զրոյցների մէջ հաղորդեց, որ իբրեւ մի առանձին շնորհ և յարգանաց նշան դէպի իմ անձը, հետեւեալ օրը լեւ բարձրանալու ճանապարհին ինձ պիտի ցոյց տայ մի քար, որ ոչ ոքի ցոյց չի տալիս, որի վրայ կան հին գրութիւններ, որով կարելի է իմանալ, թէ ինչ տեղ գանձեր կան թաղուած:

Հետեւեալ օրը նա ինձ ցոյց տուեց այդ արձանագրութիւնը. յետոյ վերադարձին ուղադրութեամբ զիտելով համանման քարեր, գտայ Հաջու կարծեցեալ խորհրդաւոր արձանագրութիւնը շատ տեղ

կրկնուած: Դոքա ողորկ երեսով, մի կամ երկու արշին գետնից
դուրս ցցուած բազալտ քարեր են, որոնց վրայ նախապատմական,
ըստ մեծի մասին համանման կրկնութեամբ քանդակներ են: Թէև
քանդակի մէջ պակասում է արուեստը, բայց անհերքելի է քան-
դակողի հմտութիւնը և փորձառութիւնը: Ներկայացրած են, բարակ
համաչափ գծերով, կամ շերտերով եղջիւրաւոր կենդանիներ, այժ
կամ եղջերամ, աղեղներով մարդիկ, երբեմն զարդեր:

Շատ էի յոգնած, նոցա վրայ մանրամասն կանգ առնել չկարո-
ղացայ, մանաւանդ Ազիդ բէկը ինձ խոստացաւ ուղարկել նոցա բո-
լորի լուսանկարը: Դժբախտաբար չստացայ:

Ի՞նչ են դոքա. արձանագրութիւն, թէ որսորդական և պատե-
րազմական խորհրդանշներ: Ի՞նչ ժամանակից են. ահա հարցեր, որ
կարօտ են լուծման:

Այս առթիւ անշահ չեմ համարում մի համանման երևոյթի
վրայ էլ ուշադրութիւն հրաւիրել:

1902 թուին մի քանի սինդականների հետ գնացինք Սեջուր
գետի աղբիւրները տեսնելու: Դիտաւորութիւն կար այնտեղից
ինքնահոս արխով ջուր վերցնել էջմիրածնի հողերը ջրելու: Հայ
Զէյվա գիւղի բնակիչներից ինձ պատմեցին, որ Կզլթափա կամ
Կարմիր բլուր բարձրութեան վրայ կայ մի տեսակ օտարոտի գրու-
թիւն, որ ոչ ոք չի կարողանում կարդալ: Այդ բլուրը, էջմիրածնից
վեց վերստ հեռու գէպի արևմուտք, Այդրգեօլից մի փոքր տարածու-
թեան վրայ, հրաբխային մի բլրակ է, առանձնակի ընկած, ամբող-
ջովին բազկացած կարմիր չեչաքարից: Բլրի տակից ամեն ուղղու-
թեամբ դուրս են ժայթքում Սեջուր գետի յորդահոս աղբիւրներից
մի քանիսը:

Հետաքրքրուցի ստուգել գիւղացիների ցուցմունքը. բլրի ա-
մենաբարձր կէտում, յիշած բնական հրաբխաքարի ոչ այնքան հարթ
մակերևոյթի վրայ, կայ մի քանի տող գրութիւն. չափազանց խոշոր
մասշտաբով: Գրութիւնը բաղկացած է խորհրդանշաններից, իրար
հետ սերտ շաղկապուած և մի քանի անգամ կրկնուած: Փորձեցի
լուսանկարել, անկարելի եղաւ. ժայռը չափ անկանոն: Ստացւում է
խառնափնթոր և մի անորոշ պատկեր: Արձանագրութեան բռնած
տարածութիւնն է երկայնութիւնը 5—6 լայնութիւնը 1—2 սաժէն:

Արդե՞հոք դա հիտիտական գրութիւն չէ: Այն ժամանակուանից
ես չատերին եմ պատմել այդ մասին և առաջարկել գնալ ուսում-
նասիրելու և արտանկարելու. տակաւին մնում է այնպէս:

Այդ բլուրը ինքն ըստ ինքեան առանձին հետաքրքրութիւն է
ներկայացնում: Նա ուրարդական կամ աւելի հին շրջանի բերդ էր.
մինչև այժմ մնացել են շրջապարսպի հետքերը՝ խոշոր սև բազալտ
քարից շարուած, որ հետու տեղից է բերուած: Բլուրի վրայ ամեն

տեղ նկատելի են շինութեան հետքեր. հին խեցեղէնի փշրանքներ և օքսիդիտնի մանրուէքներու կարծես թէ այդտեղ օքսիդիտնից նետեր պատրաստելու գործարան էր:

Երկու տարի առաջ յիշեալ Զէյվայի բնակիչները այդտեղի ջրերից նոր արխով ջուր տարան իրենց գիւղը ոռոգելու: Եւ դնացի գիտելու, ինձ պատմեցին, որ արխը փորելիս շարունակ խեցեղէններ են գտել: Իմ խնդրածքով մի երկու կտոր բերին ինձ մօտ. որ հետո վերցրի: Այդ ամանը ծածկուած էր քերնիսով:

Է.

Թողնելով, որ մասնագէտ երկրաբանները իրենց խօսքն ասեն Արարատի և Արագածի երկրաբանական յատկութեան մասին, աւելորդ եմ համարում իմ նկատածները լռութեան տալ: Այդ երկու լեռները նոյն դարաշրջանի ծնունդ են, միանգամայն համանման ծագամբ և յատկութիւններով: Լաւայի տեսակը, նրանից առաջ եկած բազալտ կարծր հրաբխային քարը, մոխրակոյտի գոյնը, գագաթներին մօտ ծծմբային շերտերը, մի և միւս լեռան վրայ յար և նման են: Երկու լեռներն էլ ձեան հալուածքը ծծելով ներս են առնում և իրենց անմիջական ստորոտներով դուրս են տալիս Սևջուր գետակներով. անհամ և վնասակար ջուր: Արարատի վրայ աղբիւրները հազուադիւրս են. Արագածի վրայ հակառակն է. շնորհիւ հետեւեալ հանգամանքի:

Նա, արդէն քանիցս նկատել ենք, չափազանց լայն նստուածք ունի. նրա վրայ ստորերկրեայ լաւան դուրս է ժայթքել միաժամանակ շատ տեղերից, որից և բլուրների և գագաթների յաճախութիւնն է: Ահա այդ լայն նստուածքը կազմելով հովիտներ, սարազաշտեր և փոսորակներ, ձեան ջրերը սփռում է ամեն ուղղութեամբ, կազմում է լճակներ և այդպիսով մշտահոս աղբիւրներին ջուր մատակարարում:

Չորս գագաթի միջի վիթխարի փոսը, ոչ թէ հրաբխի բերան է, ինչպէս կարելի է ենթադրել, այլ իրար շատ մօտի և միաժամանակ գործող հրաբխային գագաթների միջի տարածութիւնն է: Նա լքցուել է գագաթներից հոսող լաւայից: Նա շարունակում է և այժմ լցնուել նոյն գագաթների անընդհատ փչող քարակարկաններով, աւազով և խիճով: Մեծ Արարատի ամենաբարձր գագաթը, ինչպէս առիթ կունենանք նկատելու, ներկայացնում է բաւական ընդարձակ մի դաշտ, ձեան յաւիտենական և հաստ շերտով ծածկուած: Արագածը այդպէս չէ. նրա գագաթները ամուր շատ են ազատուում ձիւնից, նոքա պաշտպանուած չեն: Նորա վրայի բազալտը բարակ ծալքերով իրար վրայ են դարձած իրար վրայ դարձած գրքերի հատորների պէս. սառուցը պա-

տըռտում բաժանում է իրարից, իսկ ջրի հոսանքը չարունակ մաշելով նոցա տակի խիճն ու աւազը, դարերով կործանում և մաշում է թէ բլրակները և թէ բարձր գագաթները, երկու լեռների վրայ էլ նկատելի են կործանման գործողութիւնը, Արագածի վրայ աւելի մեծ չափերով:

Բաւական ժամանակ է անցել և նոր եւմ գրի առնում իմ Արագած բարձրանալու յիշողութիւնները: Շատ բան է մոռացուել, շատ շտրիխներ և պատկերներ աղօտացել: Սակայն հոգեկան ինչպիսի նմանութեամբ եմ մտաբերում այն ամենը, ինչ երբէք չի մոռացուել, այն ապրումները, որ ոչ մի նկարագրութեամբ վերարտադրել և ուրիշին հաղորդել կարելի չէ:

Այդ ուրիշները իրենք պիտի մտածեն այդ ամենը և շատ աւելին անձամբ տեսնելու և զգալու: Ծշմարիտ գառնութեամբ է սիրտս լցւում, երբ յիշում եմ թէ ամեն տարի աշխարհիս ամեն ծայրերից, քաղաքակիրթ ազգերի ներկայացուցիչները գալիս են մեր երկրի ամեն մի անկիւնը ամեն ուղղութեամբ և գիտակցական ծրագրով ուսումնասիրում, իսկ մեր մէջ է կսկուրսիաներ կազմելու պահանջը դեռ նոր է սկսւում:

Մեր լեռների և մեր երկրի աննման բնութիւնն ուսումնասիրող յատուկ ընկերութիւններ չկան, ինչպէս Եւրոպայում, որոնց համար ընտանի և ծանօթ լինի երկրի ամեն մի անկիւնը: Բազմաթիւ հայ ուսանողութիւնը ամառնային արձակուրդները սրբան գեղեցիկ և օգտակար կերպով կանցնէր, եթէ տարէցտարի լաւ մշակուած ծրագրով երկրի մի ծայրից միւսն անցնէր: Որքան թարմութիւն և որքան պաշար հետը կտանէր դէպի իւր հանրակրթարան համալսարանը:

Սարգար Բուլաղում, Արարատ բարձրանալուց առաջ, մեր հասած առաջին երեկոյեան, գերմանացիները ինձ չրջապատեցին և խնդրեցին պատմական տեղեկութիւններ տալ Արարատի և Հայաստանի մասին: Սկսեցի ուրարդեան չրջանից համառօտակի և անցայ բուն հայկական պատմութեան: Մի քանի անգամ իւր նկատողութիւններով միջամտեց պր. Կլեբս, գաղտնի խորհրդական, Հէյդելբերգի բոտանիկական ինստիտուտի գիրեկտորը: Ես իսկոյն նկատեցի, որ նա չափազանց լաւատեղեակ է մեր անցեալին: Իմ ենթադրութիւնը լիովին հաստատուեց: Հէյդելբերգի բուսաբանը Հայոց պատմութիւնը մասնագէտի պէս գիտէր:

Քանի՜ այդպիսի ոչ մասնագէտ հայ կգտնենք:

(Շարունակելի)

4942 Թ. 22 նոյեմբերի.

Մեսրոպ Խաչիկեան

